ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 04 >> Մարտի 2022թ. ՆՄՈ/137-2022

Ք. Արմավիր

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, 36-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 4-րդ մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետով, 68-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N1464-Ա որոշումը.

որոշում եմ՝

1. «Էջմիածին» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, բաժնետոմսերի մարման միջոցով, նվազեցնել 30104690 (երեսուն միլիոն մեկ հարյուր չորս հազար վեց հարյուր ինը) Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Հաստատել «Էջմիածին» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ կանոնադրական կապտալը՝ 61030310 (վաթսունմեկ միլիոն երեսուն հազար երեք հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի քանակը՝ 12206 (տասներկու հազար երկու հարյուր վեց), մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել «Էջմիածին» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին (Լ. Գասպարյան)՝ ընկերության կանոնադրության փոփոխությունը սահմանված

կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 04.03.2022 16:22:20 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505